Արծվանիկ

Բնակչություն՝ 572

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 14 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1140 մ,

Արծվանիկը հնում կոչվել է Երեց կամ Երեցվանիկ և մտել է Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Բաղք (Քաշունիք) գավառի մեջ, այնուհետև՝ Արծեվանիկ գյուղ՝ Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուր գավառում, Կապանի ոստիկանական շրջանում: Ըստ հին հարկացուցակի Տաթևի վանքին տալիս էր 12 միավոր հարկ:
Արծվանիկը պատմական հարուստ անցյալ և նշանավոր հնավայր-հուշարձաններ ունեցող գյուղ է: Նախկին գյուղը, որը գտնվել է Արծվանիկից մոտ 1 կմ հարավ-արևմուտք, ըստ Ստ. Օրբելյանի՝ Երեց կամ Երեցվանիկ է կոչվել վանահայր և հետո՝ Սյունյաց եպիսկոպոս Երիցակի անվամբ, որն այստեղ շինել է Երիցվանքը (6-րդ դար)՝ իր հարակից եկեղեցիով և ճգնավորի մատուռով:
Այստեղ է գտնվում Ագռավի տապան միջնադարյան կառույցը և հնագույն ամրոցի (մ.թ.ա. 4-1 դար) ավերակները:
Գյուղի տարածքում կան դամբարանադաշտեր (մ.թ.ա. 2-1 հզմ), գերեզմանոցներ՝ տապանագիր խաչքարերով, հին գյուղատեղիներ, եկեղեցիներ:
Արծվանիկում Դավիթ Բեկի ժամանակներում տեղի է ունեցել ճակատամարտ, որում զոհվել է Զավանդուրի իշխան Թորոսը: Գյուղում 1881թ. եղել է Ռաֆֆին, որը նյութեր է հավաքել Դավիթ Բեկի մասին:
Արծվանիկում 1929թ. կազմավորվել է կալտնտեսություն, որը 1980-ին վերակազմավորվել է խորհրդային տնտեսության, լուծարվել է 1991թ. մայիսի 20-ին:
Այստեղ է ծնվել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Աշոտ Հարությունյանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 2819 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1244 հա, որից՝
- վարելահող՝ 300 հա, բազմամյա տնկարկ՝ 19 հա, արոտ՝ 332 հա, այլ հողատեսք՝593 հա

- բնակավայրերի հողեր՝ 89 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 335 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝4 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 33 հա,
- անտառային հողեր՝ 1112 հա, որից անտառածածկ՝ 898 հա
- ջրային հողեր՝ 3 հա